ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

ԵԱՔԵ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
1949

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

ԾԱՔԵ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԵՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1949

Շապիկը և իլյուստրացիաները՝
Նկարիչ ԲԱԲԿԵՆ ՔՈԼՈՋՅԱՆԻ

ГЕВОРГ ЭМИН
ШАКЭ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949



1

Առավոտյան զարթնեցինք.
— Այս ովքե՞ր են աղմկում...
Հավաքվել են տնեցիք,
Ուրախ խոսում են բակում։

Երկու քեռի անծանոթ
Մի ավտո են դատարկում...
Թողած մարզանքը կիսատ,
Բակ վազեցինք մենք ուրախ։

— Ո՞ւմ ավտոն է, մայրիկ, սա,
Եվ որտեղի՞ց են սրանք։
Տխրեց մայրիկն այս խոսքից,
Ասպա ասաց մեղմաբար.

— Երբ չկայիք դուք խսկի,
— Երբ դեռ փոքր էր ձեր պապան,
Ցաշխատի պես վայրենի
Թյուրք ղորքերը արշավել,
Ջարդել էին հայերին
Ու տները ավերել։

Մենք հարց տվինք զարմացած.
— Իսկ ո՞ւր էր զորքը Կարմիր։
— Այդ վա՜ղուց էր,— նա ասաց,—
Ժամանակով՝ Սուլթանի։

Սովետական մեր երկիրն
Այն ժամանակ դեռ չկար,
Որ ջարդեր այդ սև զորքին,
Հասներ նրանց օգնության։

— Հետո՞, մայրի՛կ,— հարցրինք,—
Պատմիր՝ է՞լ ինչ է եղել...
— Հետո... կասեմ առանձին,
Հիմա դնանք ու թեյենք։

Մենք նստեցինք թեյելու,
Սակայն և չենք համբերում.
— Մայրի՛կ, պատմի՛ր, սիրելիս,
Այդ ո՞ւմ իրերն են բերում....

Եվ մայրիկը մեզ ասաց.
— Կռվի դաժան այդ տարին.
Ով թյուրքերից ազատված,
Մնացել էր կենդանի,

Կա՛մ Արաքս գետն անցնելով՝
Եկավ, հասավ Երևան,
Կա՛մ աշխարհում ցրվելով՝
Մնաց առանց օթևան։

Ով անցել էր դեռն Արաքս,
Եկել, հասել այս հողին,
Հոկտեմբերից թեւ առած,
Շինեց իր տունը նորից։

Եվ ապրում է մեզ նման՝
Ազատ, գոհ ու երջանիկ...
Իսկ ով օտար հող գնաց,
Զրկվեց ամեն մի բանից։

Զրկված ամեն մի բանից,
Անհող, անջուր ու անտուն,
Ընկած դռներն օտարի,
Եա գալու հույսը սրտում,

Ապրում էին վշտի մեջ
Պանդուխտ հայերը այսպես,
Մինչ Ստալին սլապը մեծ
Նրանց վշտից ազատեց։

Երբ մեր երկիրը հալթեց
Ֆաշիստական զորքերին
Եվ Հիտլերից ազատեց
Բոլոր ճնշված ազգերին,

Ասաց նրանց.
— Շինեցե՛ք
Ձեր ավեր տունը նորից
Եվ ազատ կյանք կառուցեք՝
Փրկված մահից ու սովից։

Իսկ հայերին դաղթական,
Եղբայրներին մեր անտուն,
Նա բացած դուռն իր հոկա՝
Կանչեց, բերեց իրենց տուն,



Որ չմաշեն կյանքն իրենց
Դռան առաջ օտարի
Եվ իրենց տունը չինեն,
Ապրեն մեզ պես երջանիկ։

— Ա՛յ, քեռիներն այս երկու
Պանդուխտներն են իմ ասած,
Որ մեր բակում ու շենքում
Բնակարան ստացած,

Այսօրվանից մեզ նման
Պիտի ապրեն երջանիկ,
Կյանքով—սրտով նվիրված
Սովետական աշխարհին։—

Երբ մայրիկը այս ասաց,
Մենք կրկին բակ վազեցինք,
Պանդուխտ քեռուն հարազատ
Ժպտացինք ու ասացինք.

— Բարի գալո՛ւստ Ձեզ, քեռի՛,
Մեզ պատմել է մեր մայրն,
Ինչ բան որ Ձեզ պետք լինի,
Մենք կգտնենք Ձեզ համար։

Կուզեք՝ օդնենք Ձեզ հիմա
Ու իրերը դասավորենք,
Կուզեք՝ կտուր բարձրանանք,
Ռադիոյի գլխը սարքենք։

Կուզեք՝ հիմա հենց վազենք
Ու թերթ բերենք Ձեզ համար...
Քեռին ասաց.— Ձեմ ուզեր,
Շնորհակա՛լ եմ, տղա՛ք։

Հետո լիջավ, գրկեց մեզ
Ու արցունքի մեջ ասաց.
— Դեռ ոչ ոք ինձ կյանքիս մեջ
Այսպես խոսքեր չէր ասած։

Ես ասացի.—Վա՛յ, քեռի՛,
Լա՞ց ես լինում, ի՞նչ եղավ։
Իսկ նա ասաց.— Ինձ ներե,
Ե՛ս էլ մանուկ եմ, տղա՛ս։—

Մենք օգնեցինք մեր քեռուն,
Իրերը ներս կրեցինք,
Ջուր բերեցինք մեր քեռուն
Ու լրագիր բերեցինք։

2

Երբ դառնում ենք մենք դպրոցից,
Ճաշ ենք ուտում, առնում հանգիստ
Եվ խաղում ենք պահմտոցի
Մանուկների հետ մեր բակի։

Մարոն աչքերը փակում,
Հաշվում է պինդ ու դոռում.
Մենք վազվզում ենք բակում
Ու թաքստոց որոնում։

Ես կողքի բակը մտա,
Շուտ դես ու դեն եմ նայում,
Մեկ էլ՝ փոքրիկ մի աղջիկ
Դեպի ինձ է սլանում։

Ես ուզեցի այն բռնել,
Մեկ էլ՝ փոքրիկ մի աղջիկ
Հասավ, գնդակը խլեց
Ու ցցվեց իմ առաջին։

Ես լուռ նայում եմ նրան,
Աչքերիս չեմ հավատում.
«Ո՞վ է աղջիկն այս նիհար,
Ի՞նչ գործ ունի մեր բակում»։

Ես հարցնում եմ.— Ո՞վ ես դու,
Եվ որտեղի՞ց բուսնեցիր...
Նա թե.— Մեզի այս առտու
Հոս աղվոր տո՛ւն են տվեր։

— Քո անունն ի՞նչ է։
— Շաքե՛։
— Որտեղի՞ց ես։
— Բեյրութե՛ն։
Մենք հոս նավո՛վ ենք եկեր
Ու չոդեկա՛ռք ենք նստեր։

Ես ասում եմ.
— Բա՛ն ասիր...
Ես նստել եմ օդանա՛վ...

Նա թե.— Քեզ բան մը չըսի՛,
Ես՝ ինձ, դուն ալ քեզ համար...

Զարմանք բա՛ն է... ինչպե՞ս թե՝
«Ես ի՛նձ, դուն ալ քե՛զ համար»...
— Տղե՛րք, եկեք մի այստեղ,
Գուցե դուք բան հասկանաք։—

Մարոն, Ալիկն ու Կարոն
Շաքեի մոտ են գալիս.
— Խաղա՛նք,— ասում է Մարոն։
Նա գնդակը չի տալիս։

Պինդ կպել է գնդակին,
Թե.— Իմի՛նն է ասիկա...
Մենք ասում ենք.— Հասկացի՛ր,
Խաղից հետո քեզ կտանք։

Գնդակն ինչ է, որ այսօր
Նրա համար խռովես...—
Նա թե.— Հայրիկը ասոր
Հինգ սուրիակա՛ն է տվեր...

— Ամո՛թ, ամո՛թ քեզ, ժլա՛տ,—
Մարոն ասում է նրան.
Եվ Շաքեից խռոված
Մենք ուզում ենք հեռանալ,

Երբ մայրիկը Ալիկի,
Միջանցքի դուռը բացած,
Մոտենում է մեր խմբին
Եվ մեզ ասում բարկացած.

— Անհարմար չէ՞ ձեզ վիճել,
Այն էլ առանց պատճառի...
Դեռ իրար լավ ճանաչեք,
Նո՛ր խռովեք իրարից:

Շաքեն դեռ նո՛ր է եկել
Ուրի՛շ-ուրի՛շ աշխարհից.
Հազար վիշտ է նա տեսել,
Հազար տանջանք ու չարիք:

Իր կամքով չէ նա դարձել
Այդպես մենակ ու ժլատ,
Նա չգիտե դեռ ձեզ պես,
Թե ո՛րն է վատ, ո՛րը՝ լավ:

Նա անծանոթ է անդամ
Մեր բակին ու քաղաքին,
Մեր աշխարհի ժիր մանկանց,
Սովետական մեր կյանքին:

Իսկ դուք նրան փոխանակ
Բան ասելու մի կարդին,
Սոխպում եք խորթանալ
Ձեր երջանիկ խմբակից։

Ա՛յ, ո՞վ կարող է հիմա
Ցույց տալ քաղաքը նրան...—
— Մարո՛ն...
— Ալ՛իկը...
— Կիմա՛ն...
— Մենք բոլո՛ր էլ կգնանք։

— Շաքե՛, ուզո՞ւմ ես գնալ,
Ծանոթանալ քաղաքին։
— Կուզե՛մ, տեսած չեմ բնավ,
Կեցեք՝ ըսեմ մայրիկին։

— Վաղն ի՞նչ օր է։
— Կիրակի՛։
Լա՛վ, քնեցե՛ք դուք հիմա,
Վաղը կասեք մայրիկին
Ու միասին կգնաք։

3

Տրամվայը՝ ձի՛ն–ձի՛ն–ձի՛ն...
Ավտոները՝ տո՛ւ–տո՛ւ–տո՛ւ...
Ձե՛նք վախենում նրանցից,
Մենք գտնվում ենք մայթո՛ւմ։

Սա փողո՛ցն է Շահումյան,
Սա էլ՝ փողո՛ցը Մարքսի,
Սա հյուրանո՛ցն է «Սևան»,
Սա՝ խանո՛ւթը մեսաքսի։

Միլիցիոները ջահել
Տեղում պտույտ է գալիս,
Ձեռքի վայրը երկարել,
Ճանապարհ է ցույց տալիս:

— Դո՛ւ, արամվա՛յ, սլացի՛ր
Ավտո՛, թռի՛ր դու արագ,
Իսկ դո՛ւ, փոքրիկ, սպասիր,
Ճամփան վա՛ղ է քո առաջ:

— Ինչո՞ւ սատեղ կպարե,
Չի՞ վախնար աս քաջ քեռին...
— Միլիցիոնե՛րն է սա մեր,—
Ասում ենք մենք Շաքեին:

— Ի՞նչ ասել է՝ միլիցիա.
Մի անցորդ, թե՝ ոստիկա՛ն:—
Շաքեն վախով հեռացավ,
Կիրովի պարկը մտավ:

— Շաքե՛, ինչո՞ւ վախեցար
Եվ ինչո՞ւ ես դու պահվել:
— Ոստիկանե՛ն վախեցա,
Ան աղքատին կզարնե՛:—

Մարոն, Ալիկն ու Կիման
Ծա՛փ են տալիս ու ասում.
— Վա՛յ քեզ, Շաքե, վա՛յ, հիմար,
Այդ ինչե՛ր ես դու խոսում:

Այստեղ Բեյրո՛ւթը չէ ձեր,
Ի՞նչ աղքատ ու ի՞նչ հարուստ,
Ո՞վ կարող է մարդ ծեծել
Սովետական աշխարհում:

Նա մեզ համա՛ր է կանգնած,
Մեր հանգի՛ստն է պահպանում,
Նա սատանում է լոկ նրանց,
Ովքեր կա՛րմ են խանգարում:

Իսկ ով լավն է ու խելոք,
Նա փայփայում է նրանց...
— Տղե՛րք,— ասում է Կարոն,—
Եկեք նրա մոտ գնանք։—

Մենք մոտենում ենք պոստին,
Նա մեզ պատիվ է տալիս,
Ձեռքը տարած գլխարկին
Դեպի մեր կողմն է գալիս։

— Բարև՛, քեռի միլիցիա՛,—
Ասում ենք մենք միասին,—
Շաքեն Ձեզնից վախեցավ,
Նա չգիտեր Ձեր մասին։

Նա դեռ երեկ է եկել
Ուրիշ տեղից Երևան,
Խնդրում ենք մեզ օգնեցեք՝
Ցույց տալ քաղաքը նրան։—

Միլիցիոնները հանեց
Ճերմակ ձեռնոցը ձեռից,
Իր աջ ձեռքը երկարեց
Ու բարևեց Շաքեին.

— Բարո՛վ եկար Երևան,
Որտեղի՞ց ես ներդաղթել։
— Ես չարություն չե՛մ ըրած,
Ես եկած եմ Բեյրութեն...

Միլիցիոնները ժպտաց,
Ապա ասաց մեզ արագ.
— Թե այստեղից գնաք ցած,
Գործարանն է «Արարատ».

Արարատից քիչ ներքև
Նոր կամուրջն է Զանգուի,
Իսկ կամուրջից թե թեքվեք՝
Աշտարակի խճուղին։—

— Իսկ դեպի ա՞ջ...
— Սպասի՛ր,
Թող այս ավտոն ա՛նց կենա...
Իսկ թե աջ կողմ գնացիր,
Պողոտա՛ն է Ստալինյան։

Պողոտայից թե թեքվես,
Կոնդի թունե՛լն է երկար,
Իսկ թունելից քիչ ներքև՝
Երկաթգի՛ծը մանկական։

— Իսկ դեպի վե՞ր...
— Դեպի վեր
Աբովյա՛նն է ծառաղարդ,
Հազար խանութ ու տներ,
Կինո, թատրոն ու արձան։

Համալսարան, դպրոցներ,
Ինստիտուտներ բազմազան,
Հիվանդանոց, փողոցներ
Ու պուրակներ ծաղկազարդ...

— Իսկ դեպի ձախ, ես գիտե՛մ,
Կայարա՛նն է քաղաքի։
— Կայարանից թե անցնես՝
Կոմսոմոլի նոր այգին։

— Իսկ թե ա՞յս կողմ գնանք մենք
— Ա՛յ, ասեմ ձեզ, երեխեք։
Թե շուկայի կանգառից
Դեպի կրկեսը թեքվեք,

Կտեսնեք մեր քաղաքի
Գոլգոթաները բոլոր,
Ճիանելուլցները ահագին,
Մեքենաները հզոր։

— Շնորհակա՛լ ենք, քեռի՛,—
Ասացինք մենք միասին
Եվ մեջ առած Շաքեին
Դեպի վերև գնացինք...

Տրամվայը՝ ձի՛ն–ձի՛ն–ձի՛ն...
Ավտոները՝ տո՛ւ–տո՛ւ–տո՛ւ...
— Քեռուն դրամ տվեցի՞ք։
— Շաքե, ինչո՞ւ ես սուսում...

Ա՛յ, հյուրանոցը «Սևան»,
Տես՝ ինչ մե՛ծ է, ինչ շքե՛ղ...
— Ասոր տերն ո՞վ է, տղա՛ք։
— Քաղսովետի՛նն է, Շաքե՛։

— Իսկ սա պարտե՞զը աղվոր...
— Ո՞ր պարտեզը, Կոմայգի՞ն...
Քաղսովետի՛նն է։
— Այո՞...
Իսկ սա խանո՞ւթը...
— Կրկի՛ն։

— Քաղսովետն ո՞վ է, տղա՛ք,
Ինչ հարուստ մա՛րդ է եղեր...—
Մենք ծիծաղում ենք ուրախ.
— Շաքե՛, քեզ ի՞նչ է եղել...

Ի՞նչ հարուստ մարդ ու ի՞նչ բան,
Դա հիմնա՛րկն է դիմացի,
Ուր մեր հայրերը նստած՝
Մտածում են մեր մասին։—

Շաքեն լսում է ադահ
Ու նայում է զարմացած։
— Ո՞ւմ արձանն է ասիկա,
Ո՞վ է հոս տեղը կեցած։

— Սա Շահումյա՛նն է, Շաքե՛,
Ձեր դրքի մեջ չի՞ գրված,
Անգլիացիք բանտարկել
Ու սպանե՛լ են նրան։

Բոլշևի՛կ է նա եղել
Ու ընկե՛րը Լենինի,
Նա կռվել է ու մեռել,
Որ լա՛վ ապրենք մենք հիմի։

— Հայրիկիս ա՛լ են անոնք
Բեյրութի մեջ բանտարկեր ...
— Ինչո՞ւ, Շաքե։
— Ձե՛մ գիտեր,
Կըսեն՝ միթինկ է սարքեր...

... Ահա փողոցն Աբովյան
Ու արձանը Իլյիչի...
Շաքեն հանկարծ մեզ թողած՝
Վազեց մայթը դիմացի։

— Լենին բաբա՛ն է, տղա՛ք,—
Ճչում է նա զարմացած։
— Կեցցե՛ս, Շաքե՛, ա՛յ հրաշք,
Դու որտեղի՞ց իմացար։

— Ան Բեյրութ չա՛տ է եղեր...
Ես հոն անոր չեմ տեսեր,
Բայց հայրիկըս կգովեր,
«Լենին մեզ հե՛տ է», կըսեր։

— Շաքե, նա չո՛ւտ է մեռել։
— Ինչո՛ւ դեշ–դեշ կխոսիս.
Մեռած ըլլար՝ չէ՛ր կռվեր...
Հայրիկըս սուտ չի՛ խոսիր։

— Դե լա՛վ, կռիվ մի՛ արեք,
Երկուսդ էլ ճի՛շտ ասացիք։
— Այս ի՞նչ շենք է վիթխարի,
Ո՞վ ձեզանից ինձ կասի։

Դու կարո՞ղ ես, Վահանիկ։
— Այս շենքի մեջ՝ վարդագույն,
Կենտկո՛մն է մեր պարտիայի
Ու Սովետը Գերագույն։

— Ինչ ալվո՛ր է, ինչ ալ մե՛ծ ,
Ասպես զարդեր չե՛մ տեսած։
— Իսկ սա՛, Շաքե՛, Գերբն է մեր՝
Զույգ Մասիսները, տեսա՞ր։

— Իսկ Քրե՛մլը Մոսկվայի
Աստեղեն չի՞ երևար.
Մայրիկն ըսած է ինձի,
Որ՝ երբ հասնենք Երևան,

Ես Քրեմլ ալ պիտ երթամ,
Տեսնեմ Ստալին բաբան մեծ,
Անոր պաչի՛կ պիտի տամ,
Որ մեզի հո՛ս է բերեր։

— Մոսկվա՞...
Սրտո՛ն մի նայեք,
Ո՛նց է պլուխը գովում,
Մոսկվա ներա՛ն կտանեն,
Ով որ լա՛վ է սովորում։

— Ինչպե՞ս կընամ ես սորվիլ,
Հայրըս դեռ փող չի՛ շահեր...
— Մի՛ սկսիր էլ նորից,
Բեյրո՛ւյթը չի հո սա էլ։

Միջնակարգը՝ ոչ լրիվ,
Պարտադիր է ու օրենք,
Զսովորե՛ս թե ձրի,
Կատիպե՛ն քեզ սովորել...

— Իրա՞վ է սա, թե՞ կատակ,—
Շաքեն մեջ հարց է տալիս։
Մեկ էլ հեռվից՝ տրա՛-տա՛-տա՛՝
Թմբուկի ձայն է գալիս...

Փողն է հնչում բարձրաձայն
Ու թմբուկը զիլ թնդում,
Բանակային մի դասակ
Հրապարակ է մտնում։

Լեյտենանտը ձիգ քայլում
Ու կանչում է՝ «մե՛կ-երկո՛ւ» ,
Եվ դասակը մի անուշ
Հայկական երգ է երգում։

Լուսամուտից, մայթերից
Նրանց ծաղիկ են գցում,
Մանուկները շարքերին
Խառնվում են ու ցնծում։

— Ա՞ս է բանակը մերին...
— Սա՛ է,— ասում ենք,— Շաքե՛։
Շաքեն հասավ շարքերին,
Լեյտենանտին փաթաթվեց.

— Քեռի՛, բա՛ն մը քեզ ըսեմ.
Դո՞ւ ես զարկած Հիթլերին...—
Քեռին ժպտաց ու ասաց.
— Հապա նայիր շարքերի՛ն...

Հիտլերին մե՛նք ենք զարկել,
Կարմիր Բանա՛կը մեր քաջ,
Մե՛նք ենք այս հողը փրկել,
Ճամփա բացել, որ դու գա՛ս։



— Կեցիր, պաչի՛կ մը տամ քեզ...—
Լեյտենանտը ծիծաղեց,
Կրծքի ծաղիկը պոկեց
Եվ Շաքեին նվիրեց։

Զորս կողմն աղմուկ է, ծիծաղ,
Ու Շաքեին են նայում։
Նա թե.— Ինչո՞ւ կխնդաք,
Ես զորք տեսա՞ծ եմ հայու...

Անգլիացին է անտեղ,
Քիթը ցցած կքալե,
Անցնի՛լ կուզես դու մոտեն,
Կըսես՝ հիմա կվարնե՛...

— Ապրե՛ս, ապրե՛ս, քա՛ջ աղջիկ...
— Տեսա՞ք՝ ինչ լա՛վ էլ ասաց...
— Անվախ ծլի՛ր, կանաչի՛ր...
— Քո երկրո՛ւմն ես հարազատ։

Աղմկում են, մոտ գալիս
Ու Շաքեին դուրդուրում,
Մեկը ծաղիկ է տալիս,
Մեկը անունն է գրում։

Ավտոնեզը՝ տո՛ւ–տո՛ւ–տո՛ւ...
Տրամվայը՝ ձի՛ն–ձի՛ն–ձի՛ն...
— Շաքե՛, արի, գնանք տո՛ւն,
Շա՛տ ման եկանք, հոգնեցի՛նք։

Շաքեն թե.— Չէ՛, չե՛մ ուզեր,
Ես հոգնած չեմ տակավին։
— Դե լա՛վ, եկեք, սպասենք,
Ցածից ավտո է գալիս։

Մենք ավտոբուս նստեցինք,
Շաքեն հանդիստ չի տալիս.
— Ա՛ս ի՞նչ շենք է դեղեցիկ,
Ա՛ս փողոցն ո՞ւր կտանի։

— Դու նստիր, մենք կպատմե՛նք,—
Ասում ենք մենք Շաքեին.—
Ֆիլհարմո՛նիան է սա մեր,
Սա՝ խանո՛ւթը դրքերի։

Պետթանգարա՛նն է այստեղ,
Այստեղ՝ թե՛րթը «Պիոներ կանչ»,
Այստեղ Ներդաղթկոմիտե՛ն,
Իսկ սա՝ կինո՛ն է «Մոսկվա»։

— Մարո, կարող ե՞ս, ասա,
Այս ի՞նչ շենք է կարմրաքար։
— Ակադեմիան է։
— Իսկ սա՞...
— Սա դպրո՛ց է իրական։

Ավտոն սուրում է անձայն,
Մենք աղմկում ենք նորից.
— Ա՛ս ո՞ր փողոցը հասանք,
— Սա փողո՛ցն է Կիրովի։

— Վա՜յ, ինչ տուներ կան աղվոր.
Հարուստներու թա՞ղն է սա...
— Հա՛,— կատակում է Մարոն,—
Պալատ էլ կար, չտեսա՞ր։

— Ո՛չ, չե՛մ տեսած։
— Շա՜տ ափսոս,
Ես քեզ այնտեղ կտանեմ։
— Պահա՛կ կըլլա դռան քով,
Ո՞վ մեզի հոն ներս կառնե։

— Կառնե՜ն,— ասում է Կարոն
Ու մեզ աչքով է անում։
— Անտեղ ալ կա՞ թաղավոր...
— Ինչքան ուզես՝ մի վագո՜ն...

Ահա այդին «Ֆլորա»
Ու փողոցը Մոսկվայի...
Շաքեն շշմած, մոլորած,
Հարցնում է ու դալիս.

— Ա՞ս է պալատը, տղա՛ք։
— Այո՛, այս շենքն է, Շաքե՛։
Նա շեմքին ոտք չդրած՝
Հանկարծ վախով ետ ցատկեց...

Շեփորները՝ տրա՛-տա՛-տա՛,
Թմբուկները՝ տի՛կ-տա՛կ-տի՛կ,
Պիոներական մի ջոկատ
Դուրս էր գալիս պալատից։

— Ասենք ովքե՞ր են, տղա՛ք։
— Թաղավորնե՛րն են, Շաքե՛։
Շաքեն աչքերը չռած
Ասում է.— Ինչ՞ կասրքեք...

— Ի՞նչ խաղ, ի՞նչ բան, արի՛ նե՛ր,—
Կիսան քաշում է նրան...
Լույսե՛ր, զարդե՛ր, արձաններ՝,
Պալատ չէ սա, այլ հրա՜չք։



Զոքս կողմ աղմուկ է, ծիծաղ,
Եվ ամեն մի սենյակից
Լսվում է կամ երգի ձայն,
Կամ հնչյուններ ջութակի։

Մենք ելնում ենք դեպի վերը,
Դռներից մեկը բացում,
Այնտեղ մի խումբ մանուկներ
Մոդելներ են պատրաստում։

Բաց ենք անում մի այլ դուռ,
Այնտեղ գրում են, կարդում,
Երրորդ դուռն ենք բաց անում,
Այնտեղ նկար են անում...

Իսկ կողքի մեծ դահլիճից,
Լսվում է երգ, խոսք ու ճիչ։
— Հոս ի՞նչ կընեն, բարեկա՛մ։
— Սա թատրո՛նն է մանկական։

— Կճղե՞ն հոս դալ ինձի,
Ես ա՛լ կուզեմ նվաղել...
Մեկ էլ դռնից դիմացի
Մեկը կանչում է.
— Շաքե՛...

— Ալի՛ս, աղվո՛ր ըս,— նրանք
Փաթաթվում են սրտագին...
— Դուն ե՞ր եկար Երևան...
— Դուն պատե՞ղ կընակիս...

— Հոս ի՞նչ կընես դուն, Ալի՛ս։
— Կսորվիմ ե՛րգ ու նվա՛գ...
Սենյակներից դուրս դալիս՝
Շրջապատում են նրանց։

— Կրնա՞մ ես ալ հոս սորվիլ...
— Կրնա՛ս։
— Զոռնի՛մ ես դրամ։

— Շաքե, դուն ի՞նչ կխորհիս,
Աս տունը մե՛զ են տված.
Հոս ի՛նչ ալ որ փափաքես,
Կըրնաս ընել դուն ձրի...

...Զարմանո՞ւմ ես դու, Շաքե՛,
Դեռ չգիտե՛ս դու լրիվ.
Դեռ բացի այս պալատից
Հաղար դպրոց մենք ունենք...
Ֆիզկուլտ տներ ու այլի,
Ամառային ճամբարներ,
Տիկնիկային թատրոններ,
Երկաթուղի մանկական,

Գիրք, ամսագիր ու թերթեր՝
«Հոկտեմբերիկ», «Պիոներ կանչ»...

Շաքեն բերանը բացած
Մեխվել է ու չվարել,
Եվ ասում է զարմացած.
— Սա բոլորն ո՞վ է տվեր...

— Ստալի՛նն է մեզ տվել
Կյանքն այս ուրախ, երջանիկ։
— Կրնա՞մ ըլլալ ես պիոներ։—
Հարցնում է նա մեղանից։

— Պիոներ կարո՛ղ է լինել
Մեզ մոտ ամե՛ն մի մանուկ,
Ով կարգապա՛հ է, համե՛ստ,
Ով որ լա՛վ է սովորում.

Եվ պատրա՛ստ է նվիրվել
Ստալինի մե՛ծ գործին...
— Կուզե՛մ ըլլալ ես պիոներ։
— Կդիմե՛ս ձեր դպրոցին...
. . . . . .

Մեծ շենքերում դիմացի
Արդեն լույսեր են վառվում,
Շաքեի հետ միասին
Մենք երգով տո՛ւն ենք դառնում։

Ամեն քայլի նոր փողոց,
Նոր շենքեր ու նոր տներ...
— Շաքե՛, քեզ ի՞նչ է եղել...
— Շաքե՛, ի՞նչ է պատահել...

— Ես ինձ չե՛մ մոռածեր,
Գրիգորի՛կը հիշեցի...
— Գրիգորիկն ո՞վ է, Շաքե՛։
— Տղա՛ն է մեր դրացի...

Ան ալ պզտի՛կ է, աղվո՛ր,
Բայց չի՛ կրնար հոն սորվիլ.
Կո՛ւյր է հայրիկը անոր,
Եվ կուրին հետ քով–քովի,

Ան գիշերը մինչև լույս
Բաբարեին մեջ կերգե,
Որ գինովները հարուստ
Իրենց դրա՛մ մը նետեն։

Գինովները կկուվեն,
Գրիգորիկին կզարնեն,
Գինի կուտան, ոգ խմե,
Իր հայրիկը կծաղրեն...

Ես կխորհի՛մ՝ անիկա
Հայերե՛նն ալ է մոռցե՛ր...
Իսկ սա պալա՛տը թե դար,
Հիմա երգի՛չ էր դարձեր...

Շաքեն դողո՛ւմ է, լալի՛ս,
Իսկ մենք ասում ենք նրան.
— Շաքե՛, իզո՛ւր ես լալի՛ս,
Նա Բեյրութում չի՛ մնա։

Ստալին պապը բոլորին
Ճանաչում է ու դթում,
Ստալին պապը չի՛ թողնի,
Որ նա կորչի Բեյրութում։

Կուզե՞ս՝ նամակ էլ գրենք,
Այստե՛ղ կանչենք նամակով...
— Տղա՛ք, կատակ չե՞ք ըներ։
— Պիոներական ազնիվ խո՛սք։

Շաքեն ապրումնքը սրբած՝
Վազում է ու թռչկոտում։
— Ո՞ւր ես վազում, Շաքե՛, կա՛ց,
Արդեն հասել ենք մեր տուն։

Տրամվայը՝ ձի՛ն–ձի՛ն–ձի՛ն...
Ավտոները՝ տո՛ւ–տո՛ւ–տո՛ւ...
Սա մեր տունն է գեղեցիկ
Ստալինյան պրոսպեկտում։

Մեր մայրիկները բակում
Կանգնած մեզ են սպասում,
Շաքեի մորը օգնում
Ու նրա հետ զրուցում։

— Մայրի՛կ,— գոռում է Շաքեն,—
Կեցիր, քեզ բա՛ն մը ասեմ,
Ձեմ գիտեր, ո՛ր պատմեմ՝
Ես Երևա՛նն եմ տեսեր...

— Ի՞նչ Երևան ու ի՞նչ բան՝
Դեռ մի փողո՞ց ենք չրջել...
— Դե՛,— ասում է մեր պապան,—
Ընթրիք արեք ու ննջե՛ք։

— Բարի գիշե՛ր քեզ, Շաքե՛,
Մենք գնում ենք քնելու...
Տատիկն ընթրիքը սարքել,
Սպասում է մեր գալուն։

Մենք թեյում ենք, լվացվում,
Համբուրում մեր մայրիկին,
Անկողինները բացում,
Պառկում, քնում ենք հանդիստ։

Տրամվայը՝ ձի՛ն–ձի՛ն–ձի՛ն...
Ավտոները՝ տո՛ւ–տո՛ւ–տո՛ւ...
Ժամը ինը խփեցին,
Բայց մենք արդեն չենք լսում...

4

Մենք առավոտն արթնանում,
Հագնվում ենք, լվացվում,
Լուսամուտները բացում,
Շփվում, մարզանք ենք անում։

Հետո թեյում ենք արագ
Ու պատրաստվում ենք դասի...
...Մեկ էլ Շաքեն թե.— Տղաք,
Ձե՞ք դար, խաղանք միասին...

Ես մեծ տիկնի՛կ մը ունեմ,
Ունեմ պզտիկ շոգեկառք,
Կուզեք՝ դնդա՛կս ալ բերեմ,
Կուզեք՝ մեր տո՛ն-երթանք։

— Շնորհակա՛լ ենք, Շաքե՛,—
Ասում ենք մենք միասին,—
Հիմա պիտի չտասել,
Ժամանակն է մեր դասի։

Երբ դպրոցից դառնանք տուն,
Ինչքան ուզես՝ կխաղանք...
Շաքեն նայում է, ժպտում.
— Բան մը պատմե՞մ ձեզ, տղա՛ք։

— Պատմի՛ր, պատմի՛ր, կլսե՛նք,—
Շրջապատում ենք նրան։
— Գիշերն երա՛զ եմ տեսեր...
— Երա՞զ...
— Ինչպե՞ս...
— Ի՞նչ երազ...

— Երազիս մեջ ինձ տեսա,
Ձեզ հետ դպրո՛ց կերթայի,
Ռուսերե՛ն կկարդայի,
Հայերենի պես ազատ։



Վերջը պալա՛տը դացի,
Հոն Գրիգո՛րը կերդեր,
«Պիոներ կա՛նչը» կարդացի,
Հոն իմ նկա՛րն են տպեր։

Պիոնե՛ր էի ես դարձեր,
Կքալեի՛ շարքի մեջ,
Հայրըս Մոսկվա՛ էր դացեր,
Ինծի տարեր էր իր հե՛տ։

Հոն ես Թբե՛մլը տեսա...
— Վե՞րջը,— խնդում է Մարոն,—
Այդ խակի՛ էլ երազ չէ,
Այդ մեր կյա՛նքն է լուսավոր։

Ես կարծեցի երազում
Լուսնի վրա՛ ես թռել...
— Դրան երա՞զ ես ասում,
Դժվա՞ր է այդ կատարել...

— Դե՛, ուշանո՛ւմ ենք, տղե՛ր,
Լսո՞ւմ եք ձայնը զանգի։
Զի՛ ուշանում դպրոցից
Պիոնե՛րը խակական։

— Է՛, Շաքե՛, մենք գնացի՛նք,
Դու հայրիկիդ հետ կդա՛ս...

Տրամվայը՝ ձի՛ն–ձի՛ն–ձի՛ն...
Ավտոները՝ տո՛ւ–տո՛ւ–տո՛ւ...

...Շաքեն այսօր դպրոցից,
Գիրքը ձեռքին դարձավ տուն։

ՎԵՐԶԵՐԳ

Հիմա Շաքեն մեր բակում
Ընկե՛րն է մեր հարազատ,
Կարմիր փողկա՛պ է կապում
Եվ սովորում դերազա՛նց։

Սլաքավո՛ր է հիմա
Նա մանկական դնացքում,
Գրիգորիևի համար նա
Ռուսերեն դի՛րք է կարդում։

Պիոներական պալատում
Նա նվագում է դիթա՛ռ,
Ով դասը չի պատրաստում,
Նրան օգնում է կարդա՛լ։

Ով ժլա՛տ է ու անկարգ,
Նրանց հետ խաղ չի՛ անում,
Ով որ նո՛ր է ներդաղթած,
Նրանց քաղա՛ք է տանում։

Դերձա՛կ է մայրը նրա,
Իսկ հայրիկը՝ դեպուտա՛տ,
Պողոտայում Բաղրամյան
Նրանց նոր տո՛ւն պիտի տան։

Շաքեն երկու օր հետո
Հոր հետ Մոսկվա՛ է գնում,
Պիոներներին Մոսկվայի
Մեգնից նամա՛կ է տանում։

8
1254

Իսկ ամառը միասին
Մենք գնալու ենք ճամբար...
Ով չգիտի այս մասին՝
Թող այս գրքույկը կարդա՛։

Իսկ ով ուզում է տեսնե՛լ,
Ծանոթանա՛լ Շաքեին,
Այդ՝ նրան մեր հասցե՛ն՝
Ստալինյան № 5։

Այսենք, հասցե պե՛տք էլ չի.
Ո՛չ ոք իզուր թող չդա՛.
Այդպես տղա ու աղջիկ
Ամե՛ն բակի մեջ էլ կա՛։



Խմբագիր՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ Ս. ԼԱԹՈՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. ԲԱԲԱՅԱՆ

ՎՖ 01872։ Պատվեր 1021։ Տիրաժ 5000։
Տպագրական 2 մ.։
Հանձնված է արտադրության 28/III/1949 թ.։
Ստորագրված է տպագրության 5/V/1949 թ.։

Հայպոլիգրաֆհրատի վարչության
Ա տպարան, Երևան, Լենինի փ. № 65, 1949 թ.։